Funded by the European Union

erim Equal Rights & Independent Media

Մասնակցության կանչի ուղեցույց

Ժողովրդավարությունը Արևելյան գործընկերությունում (DEAP)

Մեր մասին.

«Հավասար իրավունքներ և անկախ մեդիա»-ն (ERIM, ԷՐԻՄ) շահույթ չհետապնդող կազմակերպություն է: Կազմակերպությունը գործում է Ֆրանսիայի Լիոն քաղաքում: Մենք իրականացնում ենք նորարարական ծրագրեր՝ խթանելու մարդու իրավունքները և զորեղացնելու անկախ լրատվամիջոցների ու քաղաքացիական հասարակության ներուժը: ԷՐԻՄ-ը փոփոխություններին նպաստելու ճանապարհին կարևորում է տեղական կազմակերպությունների հետ համագործակցությունը՝ վերապատրաստման, գործընկերության, կրթության, հետազոտության և ենթադրամաշնորհներ տրամադրելու միջոցով:

Կազմակերպության մասին ավելին կարող եք իմանալ այստեղ:

«Ժողովրդավարությունը Արևելյան գործընկերությունում» (DEAP) ծրագիրը Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող և ԷՐԻՄ-ի կողմից իրականացվող 36-ամսյա ծրագիր է, որը մեկնարկել է 2024 թվականի ապրիլին: Ծրագիրը նպատակ ունի Արևելյան գործընկերության երկրներում նպաստել ներառական, դիմակայուն և ժողովրդավարական հասարակությունների ձևավորմանը և զարգացնել քաղաքացիական հասարակության և տեղական կազմակերպությունների կարողությունները՝ աջակցելով հետազոտություններին և քաղաքականության վերլուծությանը, ինչպես նաև կազմակերպելով մշակութային և ցանցային միջոցառումներ:

Ուղեցույցի բովանդակությունը.

1. DEAP ծրագրի շրջանակներում ԷՐԻՄ-ի կողմից տրամադրվող դրամաշնորհային հնարավորություններ (աջակցության ընդհանուր նպատակը և առաջնահերթությունները, աջակցության չափը և դրամաշնորհի օգտագործման պայմանները)

2. Ծրագրի թիրախային խմբերը

3. Նախագծային առաջարկներ ներկայացնելու գործընթացը
4. Նախագծային առաջարկների գնահատումը և հաղթող նախագծերի ընտրության կարգը
5. Հնարավոր դրամառուների խորհրդատվության գործընթացը
6. Ֆինանսավորման տրամադրման կարգը
7. Ծրագրի շրջանակներում թույլատրելի ծախսերը

1. DEAP ծրագրի շրջանակներում ԷՐԻՄ-ի կողմից տրամադրվող դրամաշնորհային հնարավորություններ.

Հայտադիմումներ.

Մրցույթը բաց է Հայաստանում գործող անկախ մեդիաների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) համար: Մենք նախատեսում ենք տրամադրել կարողությունների զարգացմանն ուղղված **2 դրամաշնորհ**՝ յուրաքանչյուրը **մինչև 17.000 եվրոյի** չափով: Մրցույթին դիմող ՔՀԿ-ները պետք է ներկայացնեն իրենց կառուցվածքը, կարիքները և առաջիկա 2 տարվա ռազմավարական ծրագրերը: ՔՀԿ-ները կընտրվեն հիմնվելով այն չափանիշների վրա, որոնք մանրամասն նկարագրված են հայտատուների համար նախատեսված մրցույթում:

Կազմակերպչական կարողությունների գնահատում.

Յուրաքանչյուր ընտրված կազմակերպություն կշահի ԷՐԻՄ-ի և կարողությունների զարգացման տեղական փորձագետի կողմից անցկացվող կազմակերպչական կարողությունների գնահատումից: Եթե կազմակերպության տեղայնքի անվտանգությունը թույլ տա, փորձագետը երկու-երեք օր կանցկացնի տեղում յուրաքանչյուր ընտրված կազմակերպության հետ: Հակառակ դեպքում, կազմակերպության հետ համաձայնեցմամբ կորոշվի այլընտրանքային վայր: Փորձագետը հարցազրույցներ կանցկացնի անձնակազմի անդամների հետ, կուղարկի հարցաթերթիկներ և կանցկացնի ներքին ընթացակարգերի և կառուցվածքի անմիջական դիտարկում: Կազմակերպության կարողությունների գնահատումից հետո փորձագետը կպատրաստի հաշվետվություն և կաշխատի յուրաքանչյուր կազմակերպության հետ՝ կազմելու կարողությունների զարգացման ծրագիր:

Կարողությունների զարգացման ծրագիր.

Երբ ՔՀԿ-ները հաստատեն իրենց կարողությունների զարգացման ծրագիրը, նրանք դրամաշնորհ կստանան այն իրականացնելու համար, ինչը նշանակում է, որ նրանք կաշխատեն փորձագետների հետ ծրագրում ընդգրկված կարողությունների զարգացման յոթ ոլորտներից մեկի կամ մի քանիսի շրջանակներում: Կարողությունների զարգացման ծրագիրը պետք է ունենա նպատակներ, գործողություններ, թիրախներ, փուլեր և ռեսուրսների բաշխում: Թիրախային ՔՀԿ-ներից կպահանջվի ԷՐԻՄ-ին նախապես տեղեկացնել փորձագետների ընտրության մասին, և միայն ԷՐԻՄ-ի կողմից հաստատում ստանալուց հետո ՔՀԿ-ները կկարողանան համագործակցել փորձագետների հետ: ԷՐԻՄ-ը կարող է աջակցել և առաջարկել դասընթացավարներ և փորձագետներ ներքին տվյալների բազայից, եթե ՔՀԿ-ները մարտահրավերների բախվեն փորձագետներ ներգրավելու հարցում:

Յուրաքանչյուր ՔՀԿ կունենա առավելագույնը 17,000 եվրո հատկացված բյուջե՝ կարողությունների զարգացման ծրագրի իրականացման համար, և բյուջեն կմշակվի կարողությունների զարգացման փորձագետի հետ համագործակցությամբ:

Կարողությունների զարգացման գործողություններ.

Կարողությունների զարգացման ծրագիրը կարող է ներառել տարբեր գործողություններ, օրինակ՝ դասընթացներ, երկարաժամկետ մենթորություն, տեխնիկական աջակցություն (օրինակ՝ ծրագրային ապահովում), իրավական աջակցություն՝ ներքին քաղաքականության և ենթաօրենսդրական ակտերի մշակման համար և այլն: Կարողությունների զարգացման ծրագրի ուղղությունները կարող են լինել, օրինակ՝ թվայնացում և թվային անվտանգություն, նախագծերի կառավարում, ֆոնդահայթհայթում, առաջնորդություն և կառավարում, ֆինանսներ և կառավարում, ռազմավարական պլանավորում, հոգեբանական և մասնագիտական այրման դեմ աջակցություն, ուսուցում և մենթորություն շահերի պաշտպանության, մեդիագրագիտության վերաբերյալ՝ ապատեղեկատվության դեմ պայքարելու նպատակով:

Շահառուները պետք է ներկայացնեն միջանկյալ և վերջնական ֆինանսական և պատմողական հաշվետվություններ, որոնք կներկայացնեն ծրագրի արդյունքներն ու ձեռքբերումները:

Փորձի փոխանակում.

Դրամառուների ընտրությունից հետո մենք համատեղ հանդիպում կկազմակերպենք՝ քննարկելու պայմանագրերի կնքման, ծրագրի իրականացման և հաշվետվությունների ներկայացման մանրամասները: Դուք հնարավորություն կունենաք հանդիպել նաև Հայաստանում մյուս դրամառու կազմակերպության թիմի հետ:

Մենք նախատեսում ենք նաև Արևելյան գործընկերության մյուս երկրներում երկուական կարողությունների զարգացման դրամաշնորհներ տրամադրել: Հետևաբար, բոլոր երկրների դրամառու կազմակերպությունները կհրավիրվեն մասնակցելու երեք ցանցային հանդիպումների, որոնք կազմակերպվելու են ծրագրի իրականացման 3 տարիների ընթացքում՝ Արևելյան գործընկերության տարբեր երկրներում: Այս միջոցառումների ընթացքում նրանք կկարողանան կիսել իրենց փորձառությունը կարողությունների զարգացման ծրագրերի, մարտահրավերների, քաղած դասերի և հաջողությունների մասին:

2. Ծրագրի թիրախային խմբերը. ովքեր կարող են մասնակցել մրցույթին.

Մրցույթին կարող են դիմել Արևելյան գործընկերության երկրներում գործող ՔՀԿ-ները, մասնավորապես.

- հասարակական կազմակերպություններ
- ՔՀԿ-ներ (կանանց իրավունքներ, ԼԳԲՏ իրավունքներ, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ և այլն)
- Անկախ մեդիաներ, որոնք լիովին անկախ են պետական և քաղաքական ազդեցությունից
- Նախաձեռնություններ, ներառյալ չգրանցված նախաձեռնությունները (օրինակ՝ կամավորական կազմակերպություններ, երիտասարդական խմբեր, քաղաքացիական նախաձեռնություններ և այլն)
- Սոցիալական ձեռնարկություններ, որոնց գործունեությունը նպաստում է սոցիալական հզորացմանը (օրինակ՝ Impact Hubs)
- Գրանցված ձեռնարկություններ, որոնք գործում են գրանցված ՔՀԿ-ներին աջակցելու համար
- Արվեստագետներ
- Կրթական կազմակերպություններ, ակադեմիաներ

Մրցույթը բաց է անկախ մեդիաների և ՔՀԿ-ների համար:

Կրոնական և քաղաքական կազմակերպությունների կողմից ներկայացվող հայտադիմումները հաշվի չեն առնվելու:

3. Նախագծային առաջարկներ ներկայացնելու գործընթացը

- Մրցույթին դիմելու համար անհրաժեշտ է ներկայացնել հայտադիմում՝ համաձայն այս մրցույթի պահանջների:
- Բյուջեն ներկայացնելու համար անհրաժեշտ է կիրառել սույն հայտարարությունում ներառված բյուջեի ձևանմուշը EXCEL տարբերակով:

Հայտադիմումները պետք է ներկայացվեն deap.team@protonmail.com էլ. հասցեին: Նամակի վերնագրում անհրաժեշտ է նշել “DEAP - Capacity development for Armenia” : Հայտադիմումը

պետք է ներկայացնել word տարբերակով, իսկ բյուջեն և ինքնագնահատումը EXCEL տարբերակով: Հայտադիմումը հայերեն ներկայացնելու դեպքում անհրաժեշտ է կցել նաև զուգլ թարգմանությամբ անգլերեն տարբերակը:

Հայտադիմումը ներկայացնելու համար անհրաժեշտ ձևաթղթերը կարող եք գտնել այստեղ.

- Առաջին ընտրական փուլին մասնակցելու համար հայտերը պետք է ներկայացվեն առցանց՝ մինչև **2024 թվականի նոյեմբերի 10-ը, ժամը՝ 18:00-ն**:
- Սոցիալական մեդիայի միջոցով ուղարկված հայտերը չեն կարող դիտարկվել:
- Մինչ հայտի ուղարկելը անհրաժեշտ է ստուգել, որպեսզի փաստաթղթերը տեխնիկական խնդիրներ չունենան, հակառակ դեպքում հայտը հնարավոր չի լինի դիտարկել:

4. Նախագծային առաջարկների գնահատումը և հաղթող նախագծերի ընտրության կարգը.

- Հայտադիմումը ստանալուց հետո ԷՐԻՄ-ը կտեղեկացնի հայտատուին դրա ստացման մասին:
- Ներկայացվող նախագծերը կգտնահատվեն հետևյալ տրամաբանությամբ.
  - ⇒ Մրցույթի տեխնիկական պահանջներին համապատասխանության ստուգում
  - ⇒ Ընտրող հանձնաժողովի անդամների կողմից հայտերի որակի գնահատում
  - ⇒ Հայտերն ընտրվում են Ընտրող հանձնաժողովի առաջարկությունների հիման վրա

- **Մենք կտեղեկացնենք ընտրության արդյունքների մասին էլ. նամակով՝ ոչ շուտ քան սույն թվականի նոյեմբերի 24-ը:**
- Ձեր նախագծի ընտրության դեպքում, մենք Ձեզ դրա մասին կտեղեկացնենք էլ. նամակի միջոցով: Փորձագետի կողմից կազմակերպության կարողությունների զարգացման գնահատումից հետո մենք կկնքենք դրամաշնորհային պայմանագիր:
- Պայմանագրի կնքումը կիրականացվի սույն թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին:

5. Հնարավոր դրամառուների խորհրդատվության գործընթացը

Մրցույթի մասին հարցեր ունենալու դեպքում մեզ հետ կարող եք կապ հաստատել amkrtchyan@erim.ngo էլ. հասցեով:

6. Պայմանագրի կնքում և հաշվետվությունների ներկայացում

- Նախագծի վերջնականացումից և Ընտրող հանձնաժողովի կողմից հնարավոր դիտարկումների շտկումից հետո ԷՐԻՄ-ը կկնքի դրամաշնորհային պայմանագիր:

- Դրամաշնորհը կտրամադրվի երեք կամ ավելի փոխանցումներով: Սրա մանրամասները կքննարկվեն պայմանագրերի վերջնականացման փուլում հնարավոր դրամառուների հետ:
- Ծրագրի իրականացման ընթացքում և ծրագրի ավարտից հետո ԷՐԻՄ-ը կմշտադիտարկի ծրագրի շրջանակներում իրականացված գործողությունները և դրանց արդյունքները:
- Ծրագրի ավարտից հետո անհրաժեշտ կլինի ներկայացնել պատմողական և ֆինանսական հաշվետվություններ: Պայմանագրերի կնքումից հետո հաշվետվությունների ներկայացման մանրամասները կներկայացվեն դրամառու կազմակերպություններին: Հաշվետվությունների ներկայացման շրջանակներում մարտահրավերների բախվելու դեպքում մենք ուրախ կլինենք աջակցել ձեզ:

7. Ծրագրի շրջանակներում թույլատրելի ծախսերը

Բյուջեի բոլոր ծախսերը պետք է անմիջական կապ ունենան նախագծի հետ:

Թույլատրելի ծախսեր՝

- Փորձագետների և դասընթացավարների հոնորարներ և տրանսպորտային ծախսեր
- Դասընթացների, ռազմավարական պլանավորումների կազմակերպչական ծախսեր (տրանսպորտային ծախսեր, գիշերակաց, սնունդ և այլն)
- Դասընթացներ և տեխնիկական աջակցություն՝ հիմնված կազմակերպչական կարիքների վրա, ինչպիսիք են՝ խորհրդի զարգացումը և կառավարումը, հասարակայնության հետ կապերը, ռազմավարական պլանավորումը, ֆինանսական կառավարումը, կամավորական համակարգերը, շահերի պաշտպանությունը և հաղորդակցությունը, թվային անվտանգությունը և այլն
- Ծրագրային ապահովման և տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ծառայություն
- Հաղորդակցման և մարքեթինգային ծախսեր՝ դիզայն, վիդեոնկարահանում և լուսանկարահանում, բրենդինգ, սոցիալական մեդիայի առաջխաղացում և այլն
- Գործողությունների հետ անմիջական առնչություն ունեցող ադմինիստրատիվ ծախսեր, օրինակ՝ աշխատակիցների աշխատավարձեր, բանկային ծախսեր և այլն
- Նախագծի հետ առնչություն ունեցող այլ ուղիղ ծախսեր

Ոչ թույլատրելի ծախսեր՝

- Կազմակերպության գրասենյակի վարձավճար, նախագծում չներգրավված աշխատակիցների աշխատավարձեր և այլն
- Կազմակերպության այլ ծրագրերի ծախսեր
- Ծախսեր, որոնք արդեն վճարվում են այլ դրամաշնորհների միջոցով

- Բյուջեում չնշված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ծախսեր
- Ծրագրի իրականացման մեկնարկից առաջ կատարված ծախսերը
- Նախագծի հետ առնչություն չունեցող ծախսեր
- Պարտքեր